

Մամուլի հաղորդագրություն
28.07.2017 թ.

Լոռու ՄՄԱԲԹ-ը ներկայացվել է ՄԱԿ-ում

Կայուն զարգացման հարցերով ՄԱԿ-ի քաղաքական բարձրաստիճան ամենամյա ֆորումի շրջանակներում ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցչությունը և ՄԱԿ-ի Զարգացման ծրագիրը Նյու Յորքում՝ կազմակերպության գլխամասային գրասենյակում, անցկացրին կլոր սեղան-քննարկում:

«Կայուն զարգացման նպատակների իրագործմանն ուղղված հանրագուտ ներդրում և նորարարություն» խորագրով միջոցառումը քննարկում էր ՄԱԿ-ի զարգացման ծրագրերի նպատակներին համահունչ սոցիալական ձեռներեցությունն ու նորարարության ազդեցության խթանումը:

ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան **Զոհրաբ Մնացականյանը** ներկայացրեց քննարկման նպատակները՝ ընդգծելով, որ յուրաքանչյուր կառավարության գերնպատակը պետք է լինի ապահովել ժողովրդի բարեկեցությունը. *«Հայաստանը հզոր ներուժ ունի բազում ոլորտներում, այդ թվում՝ գաղափարների ուսումնասիրության և իրագործման»:*

Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) խորհրդի ատենապետ դոկտոր **Գարո Արմենը** միջոցառման բանախոսներից էր: Ներկայացնելով Հիմնադրամի գործունեությունը և Հայաստանի գյուղական համայնքների հզորացման իրենց տեսլականը՝ նա նշեց, որ COAF-ի նորարարական մոդելի շնորհիվ վերջին 13 տարիների ընթացքում նոր շունչ է առել 44 գյուղ, շուրջ 67.000 մարդու կյանք է փոխվել (Տեսանյութը՝ <https://www.youtube.com/watch?v=JLUWqyaV70>):

«Մեր նպատակն է գորավիզ լինել Հայաստանի անտեսված համայնքների երիտասարդ սերնդին: Մակայն մենք չենք կարող որակյալ կրթություն ապահովել ավերված շենքային պայմաններում»,- ասաց դոկտոր Գարո Արմենը:

COAF-ը համադրում է ենթակառուցվածքային բարեկարգումների ծրագրերը (հիմնանորոգված դպրոցներ, հիվանդանոցներ, համայնքային կենտրոններ և համայնքային նշանակության այլ կարևոր կառույցներ) միջազգային որակի կրթական, սոցիալ-տնտեսական, առողջապահական և համայնքային ծրագրերի ստեղծմանն ու իրագործմանը: Գերնպատակն է ուղղորդել և հնարավորություն ընձեռել հայաստանցիներին, ովքեր գրագիտության բարձր մակարդակ և մեծ ներուժ ունեն, հստակեցնելու ու կառուցելու սեփական ապագան:

Այնուհետև նա ներկայացրեց COAF-ի նորարարական [ՄՄԱԲԹ նախաձեռնությունը](#). Ժամանակակից հաղորդակցական տեխնոլոգիաների և անզլերենի կատարելագործման շնորհիվ այն կապ է ապահովում Հայաստանի գյուղերի բնակչության և աշխարհի միջև. *«Այս մոտեցման նպատակն է հայ գյուղացուն հասանելի դարձնել լավագույն կրթությունն ու մասնագիտական*

վերաորակավորումը: Այս կերպ գյուղական համայնքների առաջընթացի թռիչքային մեկնարկը կտանք»:

Նախատեսված 20 ՄՄԱԸԹ կենտրոնները փոխելու են գյուղական Հայաստանի բնութագիրը՝ ծառայելով որպես կրթական և ստեղծագործական հանգույց այն տարածաշրջաններում, որոնք ներկայումս զուրկ են նման հնարավորությունից. *«Մենք ձգտում ենք ձեռք մեկնել Հայաստանի շուրջ 1000 գյուղական համայնքներին հենց ՄՄԱԸԹ կենտրոնների գործունեության միջոցով»:*

Համաշխարհային նորարարության տեսանկյունից՝ դոկտոր Գարո Արմենն առաջարկեց ՄՄԱԸԹ մոդելը տեղայնացնել և գործարկել աշխարհի ցանկացած անկյունում. *«Այն ունիվերսալ է ոչ միայն Հայաստանի, այլև ամբողջ աշխարհի համար»:*

Այն հարցին, թե ո՞րն է նորարարության և փոփոխությունների գաղտնիքը, Գարո Արմենն ընդգծեց կայուն նախաձեռնությունների կարևորությունը, որոնք էլ կհանգեցնեն փոփոխությունների. *«Անմխիթար պայմաններում գտնվող դպրոցի վերանորոգումը՝ առանց նպատակային կրթական ծրագրերի, չի կարող զարգացման թռիչքուղի լինել»:*

Թեմատիկ քննարկման ընթացքում անդրադարձ եղավ ՄԱԿ-ի կայուն զարգացման միջազգային օրակարգի համատեքստում նորարարական և ազդեցիկ նախաձեռնություններին: Քննարկման բոլոր մասնակիցներն էլ համարվում են փոփոխությունների շարժիչը Հայաստանում՝ նկատի ունենալով կայուն զարգացման գործում նրանց տրանսֆորմացիոն ուժն ու նորարար լուծումները:

ՄԱԿ-ի կլոր սեղան-քննարկմանը մասնակցում էին հայաստանյան այլ ազդեցիկ ձեռնարկություններ և կազմակերպություններ ևս՝ Սուրեն Ալոյան («Դասարան.am» կրթական ծրագիր), Մարի Լու Փափազյան (ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն), Քևին Ջոնս (SOCAP), Բենի Բաներջի (Stanford ChangeLabs), Միկա Ռիկկո (Sitra Fund) և Հանս Վաիլ (INSEAD):

* * *

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների ավելի քան 67,000 բնակիչները:

2015 թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՄՄԱԸԹ նախաձեռնություն: ՄՄԱԸԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՄՄԱԸԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում: